*229. ՎԵՐԻՆ ՇԵՆ. ՝Վարարակի ՝ակունքների մոտ մի մեծ ժայռաբեկորի վրա. 6 տ.*



ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԷՐ ԹՎ. :ՁԽԳ: ԵՍ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ ԿԱՄԱՒ|Ն ԱՅ ԵՒ ԱՂԱՒԹԻՒՔ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՒՐ ԻՄՈ ՏՐ 'ՀԱ|ՅՐԱՊԵՏԱ ՏԱՐԱ· ՁՋՈՒՐՍ ՎԱՐԱՐԱԿԱՆ Ի ՎԱՐԳՈՒՏՆ, Ձ|ՈՐ ԱԾԱՊԱՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏՐ ՅԱԿՈԲ ԳՆԵԱԼ, ԷՐ ԵՒ | ՏԱՐԵԱԼ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԲ ԵՒ ԱՐԳԵԱՄԲՔ. ՁԽԱՓԱՆ|ԵԱԼՆ Ի ԲԱԶՈՒՄ ԱՄԱՆԱԿԱՑ ԿՐԿԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՅԻՇ|ԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ. ՈՐՔ ՀԱՆ-
ԳԻՊԻՔ ՍԲ ԵՐ|ՐՈՐԴՈՒԹԵ|ՄԲ| ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:

*Թվականի միավորի վրա գրիչը ուղղումներ է կատարել։*

*Արձանագրությունից վեր կա ևս երկու տող անծանոթ տառերով գրվածք, իսկ աջ կողմում երեք մեծ խաչեր։*

*Լալայան, Գ., 129—130։ Գ. Եիրմազանյան—Ակների և Գնռեվանքի ջրանցքները. «Աշխատություններ» ՀՍԽՀ կուլտ. պատմ. ինստիտուտի № 1. 1935 թ.*

## ԳՈՐԻՍ

*Այն փոքրիկ հովիտը, որի միջով անցնում է Գորիսի գետակը, հնում կոչվել է Զագեձոր. այդտեղ գոյություն է ունեցել նաև Զագաձոր անունով գյուղ, որը հավանաբար գտնվել է Ներկա Գորիսից հյուսիս-արևմուտք գտնվող Ծակերի ձոր կոչված վայրում։ Գետակը կոչվել է Վարարակի ջուր, իր ակունքները կազմող հորդառատ աղբյուրների անունով, այդ աղբյուրները բխում են Զագեձորի լեռների լանջերից։ Ներկա Գորիսի հարավից բարձրանում է Լաստագագաթը, որի ապառաժների վրա կառուցված է եղել Սյունիքի նշանավոր բերդերից՝ Հաբանդի բերդը, որը հետագայում կոչվել է նաև Զագեձորի բերդ։*

*Այս հովտում այժմ երկու բնակավայրեր կան. Գորիս և Վերին Շեն։*

*Հնում այդ հովիտը մտնում էր Հաբանդ գավառի մեջ։*

*Գորիս քաղաքը հիմնված է 1870 թ. գետակի աջ ափին, որի դիմաց ձախ ափին մնացել է հին Գորիս գյուղը, որպես քաղաքի թաղամաս։*

*Հաբանդ գավառի հին ցուցակում Ստ. Օրբելյանը հիշատակում է նման անվամբ երկու գյուղեր, Գորու և Գորայք, քանի որ այժմ Գորիսից հարավ-արևելք մի քանի կիլոմետր հեռու*

կոլությունն ունի Կլորո գյուղը, որն ավելի մոտ է հնչմամբ Գորու ձևին, պետք ենթադրել, որ ներկա Գորիսը այդ ցուցակի Գորայք գյուղն է. Գորայքը կարտասանվեր նաև Գորայս (հայցական), որից հետագայում կազմվել է ներկա Գորիս ձևը։

Գորիսի շրջակայքում այժմ կան հետևյալ արձանագիր ունեցող հուշարձանները։

1. «Խաչին աղբյուր». հասարակ փոքրիկ մատուռ. գտնվում է հին Գորիսից արևելք, բարձր ձորաբերանի գլխին մի դարավոր ծառի տակ, աղբյուրի կողքին. մատուռի արևելքում գտնվում է մի մեծ ժայռաբեկոր, որի արևելյան երեսին գտնվում է այս վայրի հնագույն արձանագրությունը. № 230։

2. Ս. Մարտիրոս, կիսաժայռափոր մատուռ, գտնվում է հին Գորիսից հյուսիս-արևելք, բարձր լանջին։ Այդ մատուռի մոտ և նրա ներսում կան 2—3 խաչքարեր, թեև անարձանագիր, բայց X—XI դարերի։

3. «Ծակերի ձոր». գյուղի հյուսիս-արևմուտքում մի խորը ձորակ, ուր կան բազմաթիվ «քրատակներ»—այրեր, այդտեղ ձորի շրթունքին կա մի ժայռափոր եկեղեցի—«Կարմիր եկեղեցի»— որի բեմի կողքին կա բոլորովին եղծված արձանագրություն։

Ձորամիջին, գետակի աջ ափին մի երկրորդ եկեղեցի կա, որի հասարակ քարերով պատերն են միայն մնացել, շինված է համաձայն արձանագրության, 1765 թ.։

Ծակերի ձորում է եղել, հավանաբար, հին Զագաձոր գյուղը։

4. Եկեղեցի և գերեզմանատուն. գտնվում է հին Գորիսի արևելյան կողմում, սարալանջի վրա։

5. «Սինդարա». եկեղեցի և գերեզմանատուն, գտնվում է գյուղից դեպի հյուսիս, 3--4 կիլոմետր հեռու մի ձորի մեջ. գերեզմանատանը կան մի քանի խաչքարեր անարձանագիր, և եղծված արձանագրություններով 2 տապանաքար։

6. Զագեձորի վանք—գտնվելիս է եղել Գորիսից արևմուտք, դեպի Վերին Շեն տանող ճանապարհի մոտ, բարձրության վրա, այժմ միայն պատերի հետքերն են մնում բանջարանոցների մեջ։

**230. ԳՈՐԻՍ.** հին Գորիսից արևելք «Խաչին աղբյուր» մատուռի հետևում, ժայռաբեկորի վրա. 5 տող.



....ՇԻՆԵ՝ՑԻ ՍՈՒՐԲՆ Ք՝ՐԻՍ

Տ՝ԱՓՈՐ ՄԵՁ Ե|Ի ԾՆՈՂԱՑ

Բ|՝ԱՐ՝ԵԽՈՎՍ Ի ՔՍ |

ԹՎ. ։ՇԽ։

*Լուսանկ. տախտ.* XXII, 81

**231. ԳՈՐԻՍ.** հին Գորիսից մի կիլոմետր հյուսիս-արևելք կիսաժայռափոր մատուռի արևմտյան մուտքի բարավորի վրա. 3 տող.



ԵՍ ԴԱԶԱՆՁԻ ԾԱՏՈՒՐՍ ԵՒ ՄՒՆԱՍ

ՇԻՆԵՑԱՔ ՍԲ ՄԱՐՏԻՐՈՍՍ, | ՃԻԼԱՎՍ.

ԹՎ. ։ՌՃԾԲ։

Վերջին տողում ՃԻԼԱՎՍ երևի շինողներից երրորդն է. հավանաբար ՃԻԼԱՁ անվան տարբերակ։

Արձանագրությունը վերաբերում է նորոգությանը. շենքը ավելի հին է, և կողքին կան 10—11-րդ դարերի անարձանագիր խաչքարեր։

*Լուսանկ. տախտ.* XXII, 82

**232. ԳՈՐԻՍ.** *Տակերի ձորի վերին մասում. «Կարմիր վանքից» քիչ հեռու, ձորամիջին ս. Մարտիրոս մատուռի հարավային մուտքի բարավորի վրա. 5 տ.*



ՑԻՇԱՏԱԿԷ ԵԿԵՂ|ԵՑԻՍ ՄԷԼԻՔ | ՈՀԱՆԻՆ ԵՒ ԻՒՐ | ԾՆՈՂԱՑՆ ՊԱՂՐ|ԻՆ. ԹՎԻՆ :ՌՄԺԴ:

*Լալայան, Դ., 30*
*Լուսանկ. սախտ.* XXII. 83

**233. ԳՈՐԻՍ.** *Հին Գորիսից արևելք, եկեղեցու հարավային պատի տակ կանգնած խաչքարի ճակատին. 3 տող.*



ԱՅՍ Է ԽԱՉՍ Մ|Է|ԼԻՔ ՀՈՒԱՐՆԻ ԱԿՑՈՐՑ.

**234. ՆՈՒՑՆ ԽԱՉՔԱՐԻ** *առաջի տապանաքարի վրա. 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ + ՄԷԼԻՔ ՀՈՒԱՆԻ + ՈՐԴԻ ԲԱՂԻՐ ԲԷԿ|ԻՆ. ԹՎ. :ՌՄԻ:

*Արձանագրությունը խիստ վնասված է։ Թվականության վերջին Լ-ն կամ ավելորդ է կամ Ա-ի ծխացորդ։*

**235. ՆՈՒՅՆՏԵՂ.** *վերոհիշյալից հյուսիս, տապանաքարի վրա. 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱ|Ն| ԱՌՆ ՄԵԾԻ ՄԵԼԻՔ ՈՀԱՆ Մ|Ա|ԼԽԱՍԻ|Ն ՈՒ ՄԻՐԻՆ, ՈՐ ԵՂԵՒ ԹՎԱԿԱՆԻ ԱՄԻՆ :ՌԻԱ:-ԻՆ

*ՄԻՐԻՆ կարող է և ԱՄԻՐԻՆ կարդացվել։ Թվականը դնում ենք ենթադրաբար։*

**236. ՀԻՆ ԳՈՐԻՍԻՑ** *հյուսիս-արևելք կիսավիմափոր մատուռից քիչ ներքև գերեզմանաքարի վրա. 4 տող.*



ԱՅՍ Է Տ|Ա|ՊԱՆ ՏՐ ՍԱԹԱՈՍԻ | ՈՐԴԻ ՏՐ ԳՐԻԳՈՐԻՆ | . ԻՇԱՏԱԿ ՈՒՍՏԱ ՑԱՐՈՒ- | ԹԻՒՆԵԱՆԻՆ: ԹՎ. :ՌՄԻ:

237. ՀԻՆ ԳՈՐԻՍԻՑ արևելք, եկեղեցու մեջ թաղված տապանաքարի երեսին. 4 տ.

ԱՅՍԷՏԱՊԱՆ
ՍԻՅԻՆ
ՄԵԼԻՔ
1822

ՄԵԼԻՔՌ
ՈՐԴԻ
ՌՌՌՍՄԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԼԻՔ ՈՒ|ՍԻՑԻՆ
ՈՐԴԻ | ՄԵԼԻՔ ՈՒՌՈՒՍՏԱՄԻՆ. :1822:

## ՅԱՅՋԻ

Գտնվում է այժմ Գորիսի շրջանի մեջ. ենթադրվում է, որ հնում Ծղուկ գավառի մեջ հիշատակված Հարժիք գյուղն է՝ 10 չափ հարկով։

Հարժիք գյուղը Ստ. Օրբելյանի օգտագործած փաստաթղթերի մեջ հիշատակված է 906 թ. առաջին անգամ, որպես Սմբատ Բագրատունու նվեր Տաթևի վանքին, հետագայում, ինչպես երևում է, մի քանի անգամ օտարացվել է ու կրկին վանքին վերադարձվել. վերջին անգամ Տարսայիճ Օրբելյանն է հաստատում գյուղը Տաթևին պատկանելու փաստը։

Ներկա Յայջի անունը Հարժիքի ձևափոխությունն է, ադրբեջանցիների ազդեցությամբ։

Գյուղի շրջակայքում կան երկու կարևոր հուշարձաններ.

1. «Կոտրած քարվանսարա». կիսավեր իջևանատուն. գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր հյուսիս, բաղկացած է մի քանի բաժանմունքներից. շինված է սրբատաշ քարերով, արևմտյան մուտքի ճակատին գտնվում է խիստ եղծված արձանագրություն, ուր պահպանվել է թվականը 1319 և Օրբելյանների անունները։

Այս հուշարձանը կարևոր է նրանով, որ իր տեղադրությամբ պարզում է Արարատյան դաշտից—Նախիջևանից դեպի Պարտավ ու Աղվանք տանող հին ճանապարհի հատվածների ուղղությունը։

Հնի նման ներկայումս էլ ճանապարհը Նախիջևան գետի ափերով հասնում է Բիչանագի լեռնանցքը, ապա իջնելով՝ Որոտանի ափերով մտնում է Անգեղակոթ գյուղը և այնտեղից, Սիսիան գյուղին չհասած՝ թեքվում է դեպի հյուսիս և բաց դաշտերով ընթանալով, Ուչ Թափալարների հյուսիսից անցնում և մտնում է Գորիս։

Յայջիի քարվանսարայի գոյությունն ապացուցում է, որ հին ճանապարհը Անգեղակոթից հետո անցել է Սիսիան, Ագուդի, Ուսուտ և Յայջի գյուղերի միջով, Ուչ Թափալարների հարավից անցնելով՝ մտել է Գորիս։

Հին ճանապարհի վտանգավոր տեղամասերում՝ փոթորիկների և ձյունի ժամանակ չշեղվելու համար՝ ճանապարհի երկու կողքերին տնկել են ցից քարեր $1\frac{1}{2}$—2 մետր բարձրությամբ. Այդպիսի ճանապարհաքարեր մնացել են ընկած և կանգուն վիճակում ինչպես «Կոտրած քարվանսարայի» մոտ, այնպես էլ այլ կետերում, մանավանդ Բիչանագի լեռնանցքի վրա և լեռնանցքի կատարին մնացած ժայռափոր, 3 մասերից բաղկացած հին քարվանսարայի մոտերքում։ Քարերի մի մասը վերին ծայրում ունի անցք, որն ապացույց է, որ քարշ տալու միջոցով են տեղափոխվել և հեռու տեղից։

2. «Քյուրդլար» գյուղատեղի. գտնվում է գյուղից դեպի հարավ-արևելք, Որոտանի ափի ցածրադիր հարթության վրա։ Այստեղ կան մի կիսավեր եկեղեցի ու գավիթ. գավթի մեջ մի մեծ տապանաքար-արձանագրությամբ և դուրսը խաչքարեր։

Հավանաբար այս գյուղատեղին հին Հարժիքն է։